ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

Ք.Արտաշատ

N 292-Ա

«25» Սեպտեմբերի 2024թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ԺՈՐԵՍ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ N 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ » ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՁՈՒԼՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի սեպտեմբերի 5-ի N 1397-Ն որոշման 4-րդ կետի պահանջով

ՈՐՈՇՈՒՄ Ե Մ

1. «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ քաղաքի Ժորես Մկրտչյանի անվան N 1 հիմնական դպրոց» և «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ քաղաքի N 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություններին սեփականության իրավունքով և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող գույքի, պարտավորությունների կազմի ճշտման գործընթացը, «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ քաղաքի Ժորես Մկրտչյանի անվան N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության փոխանցման ակտի կազմման և հանձնման-ընդունման աշխատանքների իրականացման նպատակով ստեղծել հանձնաժողովներ և

հաստատել հանձնաժողովների անհատական կազմերը՝ համաձայն հավելված 1-ի և հավելված 2-ի:

2. Հանձնաժողովներին՝ կազմակերպել

1) «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ քաղաքի Ժորես Մկրտչյանի անվան N 1 հիմնական դպրոց» և «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ քաղաքի N 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականության իրավունքով և անհատույց օգտագործման իրավունքով գույքի, պարտավորությունների կազմի ճշտման գործընթացը, «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ քաղաքի Ժորես Մկրտչյանի անվան N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ միաձուլման պայմանագրերի և փոխանցման ակտերի հաստատման, գույքի հանձնման-ընդունման աշխատանքները:

2) Աշխատանքները սկսել 2024 թվականի սեպտեմբերի 23-ին և ավարտել հոկտեմբերի 7-ին:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի տեղակալ Արտավազդ Նազարեթյանին:

ՄԱՐԶՊԵՏ՝

25.09.2024

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826

Ս. ԹԵՎՈՆՅԱՆ

Հավելված 2

ՀՀ Արարատի մարզպետի

25 09 2024թ N 292-Ա որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Նախագահ

Մարտուն Մանուկյան – ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Անդամներ

Լեոնիկ Խաչատրյան – ֆինանսական վարչության պետ

Հրաչ Դավթյան – իրավաբանական բաժնի պետ

Ալբերտ Մկրտչյան - կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Գոհարիկ Հովհաննիսյան - <<Արարատ քաղաքի N3 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն

Գայանե Թադևոսյան - Արարատ քաղաքի N3 հիմնական դպրոցի հաշվապահ

Մամիկոն Մինասյան – Արարատ քաղաքի N3 հիմնական դպրոցի տնտեսվար

Ալվարդ Հովհաննիսյան – Արարատ քաղաքի N3 հիմնական դպրոցի անձնակազմի կառավարման մասնագետ

Գայանե Սարգսյան Արարատ քաղաքի N3 հիմնական դպրոցի էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված 1

ՀՀ Արարատի մարզպետի

25 09 2024թ N 292-Ա որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Նախագահ

Մարտուն Մանուկյան – ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Անդամներ

Լեոնիկ Խաչատրյան – ֆինանսական վարչության պետ

Հրաչ Դավթյան – իրավաբանական բաժնի պետ

Ալբերտ Մկրտչյան - կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Աննա Անտոնյան - Արարատ քաղաքի N1 հիմնական դպրոցի տնօրենի պաշտոնակատար

Լիլյանա Նահապետյան- Արարատ քաղաքի N1 հիմնական դպրոցի հաշվապահ

Էդգար Հովհաննիսյան – Արարատ քաղաքի N1 հիմնական դպրոցի տնտեսվար

Հասմիկ Հովսեփյան – Արարատ քաղաքի N1 հիմնական դպրոցի անձնակազմի կառավարման մասնագետ

Մարիամ Դիլանյան- Արարատ քաղաքի N1 հիմնական դպրոցի էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՄԿՐՏՉՅԱՆ